Հայերը զանազան տիրապետությունների ներքո դարեր շարունակ պահպանել են իրենց ինքնությունը կրոնի միջոցով. յուրաքանչյուր հայ, ելնելով իր էթնիկ պատկանելությունից, արդեն քրիստոնյա է համարվում՝ անկախ այն հանգամանքից, թե նա ակտիվ հավատացյալ է, թե ոչ: Սա վերաբերում է ինչպես տեղաբնակ, այնպես էլ արտասահմանցի հայերին: Աշխարհի հնագույն քրիստոնեական երկրի բնակչության ավելի քան 90%-ը, ինչպես և նախկինում, իրեն հայ քրիստոնյա է համարում: 2011 թ. մարդահամարի տվյալներով՝ դա կազմում էր գրեթե 93%-ը, ընդ որում եկեղեցու հետ կապվածության աստիճանը չի մասնավորվում:³

1 Kermani (2018), 332 և շար.:

2 Նույնը, 337:

3 Երախտագիտությունս են հայտնում Թոմաս Բրեմերին Մյունսթերից/Բեռլինից, ինչպես նաև Թոմաս Շտերմանին

Հայ առաքելական եկեղեցուց հետո Հայաստանում երկրորդ ամենամեծ ու պետականորեն ճանաչված կրոնական հարանվանությունը կաթոլիկներն են, այսինքն՝ հռոմեակաթոլիկները և չոռմի հետ միաբանված Մխիթարյանները: Ինչպես և մյուս ուղղափառ երկրներում, այնպես էլ ներկայիս Հայաստանում, այս ունիաթների և Հայ առաքելական եկեղեցիների համակեցությունը մի եկումենիկ խնդիր է: Հայ կաթոլիկ համայնքն այստեղ կազմավորվել է միայն 19-րդ դ.՝ Օսմանյան կայսրությունից եկած կաթոլիկ փախստականների շնորհիվ: Չճշտված տվյալներով, այսօր Հայաստանում 50000 լատին և 220000 արևելյան ունիաթ կաթոլիկ կա: Այսօր Հայ կաթոլիկ եկեղեցին, աշխարհի 15 թեմերում կամ միսիոներություններում, շուրջ 500000 հավատացյալ է թվարկում: Նրանց են ծառայում ավելի քան 100 քահանա և 125 միանձնուհի: Մինչ իր վախճանը՝ 2015 թ. հունիսի 25-ը, նրանց առաջնորդն էր կաթոլիկոս Ներսես Պետրոս ԺԹ-ն, որի նստավայրը գտնվում էր Ջամադի վանքում (Լիբանան): 2015 թ. հուլիսի 24-ին՝ որպես նրա իրավահաջորդ, ընտրվեց Ֆրանսիայի Հայ կաթոլիկ եկեղեցուց հանգստի անցած եպիսկոպոս, Գրիգոր Պետրոս Ի Ղապրոյեանը: 2021 թ. սեպտեմբերին վերջինիս հաջորդեց Ռաֆայել Պետրոս ԻԱ Մինասեանը՝ որպես Կիլիկիո պատրիարք:⁴

Ռաֆայել Պետրոս ԻԱ Մինասեանը (ծնվ. 1946 թ. նոյեմբերի 24-ին, Բեյրութում) 1966-ից ուսանել է չոռմի լիբանանյան ճեմարանում և 1973 թ. ձեռնադրվել Ջամադի պատրիարքական միաբանութեան կուսակրոն քահանա: 1996-2006 թթ. եղել է Կալիֆորնիայի հայ կաթոլիկ համայնքի հովիվ, որտեղ դարձել է միաժամանակ «Ավետաբեր-Վերելք» ամսագրի խմբագիրն ու հայկական մի հեռուստատեսության հիմնադիր: 2005 թ. Մինասեանը նշանակվել է Երուսաղեմի և Ամմանի պատրիարքական փոխանորդ: 2011 թ. հունիսի 24-ին արևելյան Եվրոպայի հայ կաթոլիկ հավատացյալների առաջնորդ նշանակվելու հետ մեկտեղ, նա դարձել է «տիտղոսավոր արքեպիսկոպոս Կապադովկյան Կեսարիո Հայոց»: 2011 թ. հուլիսի 16-ին Կիլիկիո նախկին պատրիարք, Ներսես Պետրոս ԺԹ արքեպիսկոպոսը նրան օծում է եպիսկոպոս: Իսկ Հայ կաթոլիկ եկեղեցու սինոդը, չոռմի Ֆրանցիսկոս պապի համաձայնությամբ, Մինասեանին ընտրում է Կիլիկիո կաթոլիկոս-պատրիարք: Ընտրության արդյունքն ազդարարվում է 2021 թ. սեպտեմբերի 23-ին: Որպես կաթոլիկոս-պատրիարք՝ նա վերցնում է Ռաֆայել Պետրոս ԻԱ անունը:⁵

Հայաստանն իբրև պետություն և Սուրբ Աթոռը (Վատիկան) պահպանում են դիվանագիտական հարաբերություններ: Առաքելական նվիրակի նստավայրը, որը պատասխանատու է նաև Վրաստանի և Ադրբեյջանի համար, գտնվում է Թիֆլիսում: 2018 թ. մարտի 1-ից Ժոզե Ավելինո արքեպիսկոպոս Բեթենկուրը նվիրակ է Հայաստանում: Ժոզե Ավելինո Բեթենկուրը (ծնվ. 1962 թ. մայիսի 23-ին Ազրնների կղզ., Պորտուգալիա) մի կանադացի հոգևորական, արքեպիսկոպոս և

և շերբերտ Շեղերին Ռենովաբիս հիմնադրամից, իրենց մատուցած տեղեկությունների և օգնության համար:

4 Ստատիստիկ թվերն ու տեղեկությունները ըստ Basten-ի (2003), 301-303:

5 Stu' Armenian Patriarchal See of Cilicia (2023):

դիվանագետ է: Մինչ 2018 թ. իր նշանակումը եղել է պապական քարտուղարության արարողակարգի ղեկավարը: Ժամանակին Բեթենկուրն իր ընտանիքի հետ Ազրյան կղզիներից գաղթել է Կանադա: Քահանա է ձեռնադրվել 1993 թ. մայիսի 29-ին և նախ գործել Օտտավայի թեմում: 1997 թ. ընդունվել է Հռոմի պապական դիվանագիտական ակադեմիա, ապա կանոնական իրավունքի և դիվանագիտության կրթություն ստանալուց հետո ծառայության կոչվել Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության նունցիատուրայում:⁶

Կովկասի Առաքելական վարչությունը (լատ. Apostolica Administratio Caucasi Latino-rum) իր Թիֆլիսի նստավայրով, հիմնադրվել է 1993 թ. դեկտեմբերի 30-ին Տիրասպոլի թեմից արձակված «Quo aptius» (լատ.՝ Որքան ավելի տեղին է) հրամանագրով: Ի սկզբանե այն ներառում էր Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը: 2000 թ. հոկտեմբերի 11-ին վարչակազմը կորցնում է Ադրբեջանի տարածքը հօգուտ Բաքվի «Sui iuris» (լատ.՝ Իր իրավունքը) սեփական կաթոլիկ նորաստեղծ առաքելության: Կաթոլիկ հայերը հիմնականում ապրում են Մերձավոր Արևելքի երկրներում: Մեծաքանակ կաթոլիկ սփյուռքահայեր կան նաև Հյուսիսային Ամերիկայում, որն ունի իր ուրույն թեմը: 1991 թ. Գյումրիում կաթոլիկ հայերի համար հիմնվում է առանձին թեմ, որը հետագայում ընդլայնվում է ներառելով Վրաստանը և Արևելյան Եվրոպան:

Արցախում 2005 թ. անցկացված մարդահամարի ժամանակ կրոնական պատկանելությունը չի արձանագրվել: Հայ բնակչությունը, որը 2005 թ. մարդահամարի տվյալներով կազմում է բնակչության ավելի քան 99%-ը (137380-ը՝ 137737-ից), ինչպես Հայաստանում, մեծամասնությամբ պատկանում է Հայ առաքելական եկեղեցուն: Այս հաշվարկի պահին այնտեղ ապրում էր ընդամենը 6 ազերի, որոնք բնականաբար շիաներ էին: Նախկինում տեղի ունեցած արտագաղթից հետո, մի քանի հազար հրեաներից շուրջ 30 հոգի էր մնացել 2004 թ.: Բացի այդ, առկա էին նաև ավետարանական և ուղղափառ քրիստոնյաների շատ փոքրաթիվ խմբեր: Ես չկարողացա ճշտել, թե, 2020 թ. պատերազմի հետևանքով տեղի ունեցած արտագաղթից և արտաքսումից հետո, ինչ թվային հարաբերակցություններ են տիրում Արցախում: Միգուցե դա հնարավոր կլինի հայտնաբերել այս գիտաժողովում: Այս շրջանի կաթոլիկ ունիաթ եպիսկոպոսը Ջուզեպպե Պազուտոն է, Սրբազան Ստիգմատայի միաբանությունից (Congregation of the Sacred Stigmata/CSS), որն առաջնորդում է 10 ծխական համայնք՝ 9 քահանաներով, 11 վանական եղբայրներով և 15 միաբանուհի քույրերով: 20-րդ դ. սկզբին ռուսական կայսրության կազմի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղն ուներ դեռևս 222 եկեղեցի ու վանք: Արցախի Հանրապետության հուշարձանների վարչությունը հաշվել է ընդհանուր 4433 քրիստոնեական մշակութային կոթող՝ ներառյալ խաչքարերն ու հնագիտական պեղավայրերը:⁷

6 Նրա կենսագրության ու գործունեության մասին լրացուցիչ հղումներով տես՝ Wikipedia, José Avelino Betten-court (2023):

7 Luu Pulling-ի (2022):

Տվյալ թեման թույլ չի տալիս ներկայացնել կաթոլիկ եկեղեցու կամ Գերմանիայում կաթոլիկների համապարփակ դիրքորոշումը: Գերմանիայի կաթոլիկ եկեղեցին հակամարտության վերաբերյալ միայն դեպքից դեպք է արտահայտվել: Որպես կանոն՝ Արցախով միայն քչերն են հետաքրքրված, ինչը ցավով արձանագրում է Հարություն Գրիգորյանը՝ իր «Հաշտեցման հնարավորություններն ու խոչընդոտները Լեռնային Ղարաբաղի օրինակով» հոդվածում. «Բազում հրապարակային քննարկումներում հասարակության գլխավոր դերակատարները գրեթե միշտ մի նեղ շրջանակի պատկանող միևնույն անձինք են»:⁸

Հիմնականում նմանատիպ պատկերի ենք հանդիպում նաև գերմանական լրատվամիջոցներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության հատուկ ենտ լուսաբանումների և Գերմանիայի եպիսկոպոսաց ժողովի կամ գերմանացի կաթոլիկների կենտրոնական կոմիտեի հայտարարությունների պարագայում:

Այդ թեմայի արծարծման շարունակականությունը տեսնում ենք ավելի շատ գերմանական կաթոլիկ աստվածաբանական ֆակուլտետների Արևելյան եկեղեցիների ուսումնասիրությամբ զբաղվող ամբիոններում: Այստեղ հատկապես հիշարժան են Մյունսթերի համալսարանի կաթոլիկ աստվածաբանության ֆակուլտետում գտնվող էկումենիկ ինստիտուտի՝ արևելյան եկեղեցագիտության, էկումենիզմի և խաղաղության հետազոտությունների մասնագետ՝ պրոֆ. դոկտ. Թոմաս Բրեմերը,⁹ Այխշթեթի կաթոլիկ համալսարանի քրիստոնեական Արևելքի աստվածաբանության բաժնի ղեկավար՝ պրոֆ. դոկտ. Թոմաս Կրեմերը¹⁰ և Պադերբորնի Յոհան-Ադամ-Մյուլեր էկումենիկ ինստիտուտի տնօրեն՝ դոկտ. Յոհաննես Օելդեմանը:¹¹ Բոլոր երեքն էլ համաստորագրողներ են 2021 թ. մարտի 4-ին Գերմանիայի և այլ երկրների գերմանախոս աստվածաբանների համատեղ կոչի՝ «Ի պաշտպանություն Ղարաբաղում մշակութային արժեքների»:¹²

Հարկ է նշել, որ գերմանախոս շրջանակներում տվյալ տարածաշրջանի նկատմամբ առանձնակի ուշադրություն են ցուցաբերում ավստրիացի կաթոլիկ եպիսկոպոսները: 2020 թ. նոյեմբերի 10-ի զինադադարի վերաբերյալ իրենց հայտարարության մեջ նրանք կարևորում են Ավստրիայի պատմական կապերը «մեծ Եվրոպայի այս նշանակալից տարածաշրջանի հետ»: Բացի այդ, նրանք ընդգծում են իրենց անձնական կապերը Հարավային Կովկասում պատմախառնատու պաշտոնյաների, մասնավորապես Վիեննայում ուսանած Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոս, Գարեգին Բ-ի հետ: Մամլո հաղորդագրություններում նրանք նույնպես միանում են Հոռմի պապ Ֆրանցիսկոսի խաղաղության

8 Ost-West-Perspektiven (2018):

9 Նրա կենսագրության ու գործունեության մասին ավելի մանրամասն, տես՝ Universität Münster (2023):

10 Նրա կենսագրության ու գործունեության մասին ավելի մանրամասն, տես՝ Katholische Universität Eichstätt-Ingolstadt (2023):

11 Նրա կենսագրության ու գործունեության մասին ավելի մանրամասն, տես՝ Johann-Adam-Möhler-Institut für Ökumenik, Paderborn (2023):

12 Ի մասնավորի ըստ Tamcke-ի (2021), 151-155:

կոչերին: Ինչպես գիտենք, Հոռմի պապն ինքը երկու կողմերին էլ կոչ էր արել «չմտածել հակամարտությունը ուժային ճանապարհով լուծելու մասին, այլ անկեղծ բանակցություններ վարել միջազգային հանրության օգնությամբ»:¹³

Այս համատեքստում ուշագրավ է այն հանգամանքը, որ կաթոլիկ եկեղեցու պարագայում՝ որպես գլոբալ դերակատարություն ունեցող մի կառույց, արտաքին քաղաքականության բոլոր արտահայտված դիրքորոշումներն արվում են Վատիկանի իշխանությունների կամ համապատասխանաբար անձամբ Հոռմի պապի կողմից և պետք եղած դեպքում՝ մեկնաբանվում Գերմանիայում: Այս կապակցությամբ հարկ է նշել Հոռմի պապ Ֆրանցիսկոսի զույգ այցերը նախ 2016 թ. հունիսի 24-26-ը Հայաստան, և ապա նույն տարվա սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Վրաստան ու Ադրբեջան: Հոռմի Ֆրանցիսկոս պապը, նախապես Արգենտինայում եղած ժամանակ, արդեն իսկ մտերմիկ հարաբերություններ ուներ առաքելական և կաթոլիկ եկեղեցիների հայ հոգևորականների հետ:¹⁴

Հայաստան կատարած այցից հետո Հոռմի պապը մամլո ասուլիս է տվել թոհիչքի ընթացքում, որտեղ նրան գերմանական ARD հեռուստաալիքի լրագրող Տասիլո Ֆորխհայմերը հարցրել է.

«Երեկ երեկոյան էկումենիկ աղոթքի հանդպիման ժամանակ Դուք երիտասարդներին կոչ արեցիք հաշտության սկզբնադիր դառնալ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Ուղղակի կցանկանայի Ձեզ հարցնել, քանի որ մի քանի շաբաթից պատրաստվում եք մեկնել Ադրբեջան, ի՞նչ կարող եք Դուք, ի՞նչ կարող է կոնկրետ Սուրբ Աթոռն անել, որպեսզի օգնի մեզ առաջխաղացում ունենալ: Որո՞նք են այն կոնկրետ ազդակները, նման ազդակներ Դուք տվել եք Հայաստանում, ի՞նչ ազդակներ եք տալու վաղն Ադրբեջանում»:

Պապի պատասխանը.

«Ադրբեջանցիների հետ ես կխոսեմ ճշմարտության մասին, այն, ինչ տեսել եմ, ինչ զգում եմ: Եվ ես նրանց նույնպես կխրախուսեմ: Ես հանդիպել և զրուցել եմ Ադրբեջանի նախագահի հետ: Եվ ես կասեմ նաև, որ սա մի խավար գործ է, մի հողակտորի պատճառով, որն այնքան էլ մեծ չէ, հաշտություն չկնքել... Սակայն սա ես երկուսին էլ ասում եմ՝ հայերին և ադրբեջանցիներին: Միգուցե նրանք չեն համաձայնվում խաղաղության կնքման եղանակների վերաբերյալ, և հենց դրա վրա պետք է աշխատանք տանել: Դրանից բացի չգիտեմ ինչ ասեմ: Կասեմ այն, ինչ տվյալ պահին ինքնաբերաբար կգա մտքիս, բայց միշտ դրական դաշտում և՛ այնպիսի լուծումներ գտնելու ձգտումով, որոնք կենսունակ են ու նպաստում են առաջխաղացմանը»:¹⁵

13 2020 թ. նոյեմբերի 1-ի Ավստրիայի եպիսկոպոսաց ժողովի հռչակագիրը և նույն օրվա Վատիկանի մամուլի հաղորդագրությունը:

14 Մամլո ասուլիսի առաջին հարցում 2016 թ. հունիսի 26-ին Հայաստանից հետադարձ թոհիչքի ժամանակ: Տե՛ս Der Heilige Stuhl, Pressekonferenz auf dem Rückflug nach Armenien (2016):

15 Նույնը: Այստեղ նույնպես, ինչպես և նախկինում, Հոռմի պապը միտումնավոր օգտագործում է

Հոկտեմբերի 2-ին, Բաքվից վերադարձի թոհիչքի ժամանակ նույն խմբագիրը միևնույն թեմայով մեկ այլ հարց է տվել.

«Սրբազան հայր, բոլոր նրանց հետ խոսելուց հետո, ովքեր կարող են փոխել այս ահավոր պատմությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, ի՞նչ պետք է արվի՝ մնալուն խաղաղության հասնելու համար, որը կպաշտպանի մարդու իրավունքները: Որո՞նք են հիմնախնդիրները և ի՞նչ դեր կարող է ունենալ Ձերը Սրբությունը»:

Ֆրանցիսկոս պապն՝ ի պատասխան.

«Երկու անգամ, երկու ելույթներում ես շոշափեցի այդ թեման: Վերջինում խոսեցի այն դերի մասին, որ կրոնները խաղում են՝ տվյալ պարագայում աջակցելու համար: Կարծում եմ, որ միակ ճանապարհը երկխոսությունն է, անկեղծ երկխոսությունը, առանց գաղտնիության, անկեղծ՝ երես առ երես: Անկեղծ բանակցությունը: Եվ եթե չես կարող այդքան հեռու գնալ, պետք է համարձակություն ունենաս, միջազգային դատարանի դիմել, օրինակ Հաագայում, և միջազգային դատավճիռն ընդունել: Այլ ճանապարհ ես չեմ տեսնում: Այլընտրանքը պատերազմն է, իսկ պատերազմը մշտապես կործանում է, և պատերազմով կորցնում ես ամեն ինչ: Իսկ քրիստոնյաների պարագային բացի այդ գոյություն ունի նաև աղոթքը. աղոթել խաղաղության համար, որպեսզի սրտերն ընտրեն երկխոսության ու բանակցությունների այս ճանապարհը, կամ էլ միջազգային դատարան դիմեն: Բայց նման խնդիրները չի կարելի շարունակ պարտակել... [...] Իսկ Հայաստանը բաց սահմաններ չունեցող երկիր է. նա խնդիրներ ունի Ադրբեջանի հետ: Պետք է դիմել միջազգային դատարան, երբ երկխոսությունն ու բանակցություններն ապարդյուն են մնում, այլ ճանապարհ չկա: Եվ աղոթքը, աղոթք խաղաղության համար»:¹⁶

Հոռմի պապը, ակնհայտորեն, կարևորում է բանակցային հանգուցալուծումը, որը, որոշակի հանգամանքներում, պետք է որոշվի միջազգային դատարանի կողմից:

Հոռմի Ֆրանցիսկոս պապի և Գարեգին Բ կաթողիկոսի պաշտոնական համատեղ հայտարարության մեջ, որը շարադրված է էջմիածնում, 2016 թ. հունիսի 26-ին, կիրակի օրը, ասվում է.

«Մենք հորդորում ենք ազգերի առաջնորդներին՝ ունկնդրելու միլիոնավոր մարդկային արարածների կոչին, ովքեր խաղաղություն և արդարություն են տենչում աշխարհում, ովքեր հարգանք են պահանջում իրենց աստվածատուր իրավունքների նկատմամբ, ովքեր անհապաղ կարիք ունեն հացի, այլ ոչ թե զենքերի: Ցավոք, մենք ականատես ենք կրոնի և կրոնական արժեքների արմատական

«ցեղասպանություն/զենոցիդ» եզրույթը հայերի դեմ օսմանյան ոճրագործությունների դեպքում:
 16 2016 թ. հունիսի 26-ի Սրբազան Հոր մամլո ասուլիս Բաքվից դեպի Հոռմ հետադարձ թոհիչքի ժամանակ: Տե՛ս Der Heilige Stuhl, Pressekonferenz auf dem Rückflug Baku-Rom (2016):

դրսևորումների, որոնք կիրառվում են՝ ատելության, խտրականության ու բռնության տարածումն արդարացնելու համար: Մմանատիպ հանցանքների՝ կրոնական գաղափարներով արդարացումն անընդունելի է, քանի որ «Աստված խոսվածության Աստվածը չէ, այլ խաղաղության» (Ա Կոր. 14:33): Ավելին, կրոնական տարբերությունների հանդեպ հարգանքն անհրաժեշտ պայման է էթնիկ ու կրոնական տարբեր համայնքների խաղաղ համակեցության համար: Եվ հենց քրիստոնյա լինելով է, որ մենք կոչված ենք խաղաղության ու հաշտության ուղիներ փնտրելու և իրագործելու: Այս իմաստով մենք հուսով ենք, որ Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցերը կգտնեն խաղաղ լուծում»:¹⁷

Ադրբեջանական կառավարության և պաշտոնական ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Հռոմի պապը վկայակոչել է իր նախորդի՝ Հովհաննես Պողոս Բ-ի լայն մեկնաբանությունն թույլատրող նախադասությունը, որը վերջինս արտահայտել էր 2002 թ. այս երկրամաս կատարած այցի ժամանակ՝ Կովկասում հակամարտող տարածաշրջանի մասին.

«Լիահույս եմ, որ Աստծո օգնությամբ և կողմերի բարյացակամությամբ Կովկասը կարող է այն տարածաշրջանը լինել, որտեղ հարցերն ու տարածայնությունները կարգավորվում և հանգուցալուծվում են երկխոսության և բանակցությունների միջոցով: Այսպիսով՝ այս գոտին, որը Հովհաննես Պողոս Բ-ն, Ձեր երկիր կատարած այցի ժամանակ, մի գեղեցիկ պատկերով բնութագրել էր որպես «դարպաս արևելքի և արևմուտքի միջև», կարող է նաև դեպի խաղաղություն բացված դուռ և տիպար դառնալ, որից կարելի է օրինակ վերցնել, հին ու նոր հակամարտությունները հանգուցալուծելու համար»:¹⁸

Վատիկանի կողմից հայտարարությունների տարածումն ու ընդունումը դա Գերմանիայում կաթոլիկ եկեղեցու քաղաքական կարծիքներ ձևավորելու և ազդեցություն ձեռք բերելու ձևերից մեկն է: Այստեղ կարելի է գտնել մի շարք դիրքորոշումներ Արցախում և նրա շուրջ ընթացող ներկայիս վիճաբանության վերաբերյալ: Վերջին երկու տարիներին արցախյան խնդրին անդրադարձել է նաև տեղի կաթոլիկ լրատվական գործակալությունը (Katholische Nachrichten-Agentur/KNA):

- 2020 թ. սեպտեմբերի 27-ին, այն օրը, երբ սկսվեցին Արցախի շուրջ մարտական գործողությունները, KNA-ն հաղորդում է Հռոմում, Անգելուս աղոթքի ընթացքում պապի ելույթի մասին: Մա հավատացյալներին կոչ է անում աղոթել

17 Տեքստի հայերեն տարբերակը՝ Արմենպրես, 26 հունիս 2016, «Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Հռոմի պապը ստորագրել են համատեղ հռչակագիր», տես՝ <https://armenpress.am/arm/news/852281.html> (հարցվել է 28.8.2023):

18 Տե՛ս 2002 թ. մայիսի 22-ի դիմավորման արարողության ուղերձը՝ L'Osservatore Romano [գերմ.] 4. 32, թիվ 22, 31 մայիսի 2002, 7:

կովկասյան ճգնաժամային գոտում խաղաղության համար, իսկ հակամարտող կողմերին հորդորում՝ բարի կամք դրսևորել, քանզի ոչ մի լուծում չի կարող պարտադրվել զենքի ուժով:

- 2020 թ. հոկտեմբերի 7-ին KNA-ն հայտնում է, որ Ռաֆայել արքեպս. Մինասեանը կոչ է արել ԵՄ-ին՝ միջամտել հակամարտությանը: Նրա խոսքի մեջբերումն է. «Մարդկային կյանքը շատ ավելի արժեքավոր է, քան նավթն ու գազը: Եկեք թույլ չտանք, որ մի բուռ դոլարի պատճառով պատերազմ սկսվի և մարդիկ մահանան»: Ջեկույցը հավելվել է Արցախի/Լեռնային Ղարաբաղի և պատերազմական գոտում փախստականների տեղեկություններով:
- 2020 թ. հոկտեմբեր 10-ին մեջբերում է կատարվում Արցախի առաջնորդ, Պարզև արքեպս. Մարտիրոսյանից: Նա շեշտադրում է, որ Գերմանիայի կառավարությունը պետք է ներգրավվի հակամարտության հանգուցալուծմանը: Ժամանակի կանցելը, Անգելա Մերկելը կարող է իր մեծ ազդեցությամբ օգնել, որպեսզի գտնվի խաղաղության լուծումը: Ջեկույցը մանրամասնորեն անդրադառնում է Շուշիի Ամենափրկիչ տաճարի ավերմանը:
- 2020 թ. հոկտեմբերի 11-ին KNA հաղորդման վերնագիրն է՝ «Հռոմի պապը կոչ է անում պահպանել հրադադարը Կովկասում»: Պապը կրկին մեկնաբանել է հակամարտությունը Հռոմում կեսօրյա աղոթքի ժամանակ: Նա կոչ է արել խուսափել մարդկային կյանքի կորուստներից և դադարեցնել այլևս տների ու եկեղեցիների անիմաստ ավերումը՝ բնակչությանն էլ ավելի տառապանք չպատճառալու համար: Ավելի խորքային տեղեկություններով մեջբերվում է Գերմանիայի դաշնային կառավարության հայտարարությունը, որտեղ նույնպես կոչ էր արվել հարգել զինադադարը:
- Մեկ տարի անց՝ 2021 թ. հոկտեմբերի 13-ին, KNA-ն հաղորդում է Ադրբեյջանի և Հայաստանի միջև հաշտեցմանը նպաստելու կրոնական առաջնորդների փորձի մասին: Գարեգին Բ կաթողիկոսն ու Ադրբեյջանի մեծ մուֆթի, շեյխ ուլ-իսլամ Ալլահշուբյուր Փաշազադեն հանդիպել են Մոսկվայում՝ պատրիարք Կիրիլ Ա-ի մոտ: Նրանք կամենում են պատասխան գտնել՝ պատերազմը կրոնի հետ կապելու փորձերի դեմ: Կրոնների խաղաղարար ներուժը պետք է հնարավոր դարձնի համակեցությունը: Հավատքն առ Աստված և սերն օգնում են բուժել վերքերը: Այս դժվարին ճանապարհը պահանջում է իմաստություն և հեռատեսություն: Անհրաժեշտ են վստահություն, հարգանք և փոխադարձ օգնություն՝ կրոնների և ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման համար: Ադրբեյջանցի և հայ ժողովրդի համար չկա այլ ապագա, քան միասին ապրելը:
- Հատկապես հանգամանալից և խորքային մի հոդված է հրապարակվել է 2022 թ. փետրվարի 14-ին: Հեղինակն Ավստրիայի գործընկեր, Kathpress կոչվող կաթոլիկ գործակալության խմբագիր՝ Գեորգ Փուլինգն էր: Շարժառիթն Արցախում քրիստոնեական արձանագրությունները «կեղծիքների» պատրվակով ոչնչացնելու մասին Ադրբեյջանի հայտարարությունն էր:

«Արդյո՞ք այժմ առավել ուժեղներն են պատմագրություն թելադրողները», այսպես է հնչում նրա վերնագրի հարցը: Փետրվարի սկզբին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քարիմովը ծանուցել էր Լեռնային Ղարաբաղի վերագրավված տարածքների համար հատուկ աշխատանքային խմբի ստեղծման մասին: Այն պետք է որ վերացներ «հայերի մտացածին հետքերը ալբանական սրբավայրերի վրայից»: Դրա պատմական հիմնավորումն է անտիկ շրջանի կովկասյան Ալբանիայի թագավորությունը, որը գոյություն է ունեցել մինչև 9-րդ դ.: Արդեն իսկ 2021 թ. մայիսին պետական մարմինները սկսել էին «վերականգնել» Շուշիի ավերված տաճարը՝ այն իր «բնօրինակ տեսքին» վերադարձնելու նպատակով: Հաղորդվում է նաև Հայ եկեղեցու բողոքի մասին՝ թշնամանքի և ստելության այս «հակաքաղաքակրթական ակտի» դեմ: Հայ եկեղեցին կոչ էր արել միջազգային հանրությանը և կազմակերպություններին՝ աջակցություն ցուցաբերել «Ադրբեջանի կողմից իրականացվող բացահայտ մշակութային ցեղասպանության» դեմ: Հողվածում ավստասանք է հայտնվում այս «մշակութային պատերազմի» նկատմամբ միջազգային թերի ուշադրության համար: Կցանկանայի իմ կողմից ավելացնել, որ պատմական իրադարձությունների օգտագործումն առկա ազգայնական շահերն արդարացնելու համար՝ մի շաբլոնային օրինակ է, որն ընկած է նաև Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ներկայիս պատերազմի ու նաև 84 տարի առաջ՝ Ավստրիայի և Չեխիայի վրա Գերմանիայի հարձակման հիմքում:

Վերջում նշված հոդվածը ներառում է Արցախում/Լեռնային Ղարաբաղում վերջին տարիների իրավիճակի ամենից ընդգրկուն ներկայացումը:

Կովկասի հանրապետություններին ուղղված կարևորագույն ձայնը Գերմանիայի կաթոլիկների պարագայում պատկանում է «Ռենովաբիս համերաշխության նախաձեռնությանը»: Այն հիմնադրվել է 1993 թ. Գերմանիայի կաթոլիկ եպիսկոպոսների խորհրդի և գերմանացի կաթոլիկների կենտրոնական կոմիտեի կողմից՝ որպես «գերմանացի կաթոլիկների համերաշխության նախաձեռնություն կենտրոնական և արևելյան Եվրոպայի ժողովուրդների հետ»: Այս նախաձեռնությունը պետք է լիներ «գերմանացի կաթոլիկների պատասխանը նախկին արևելյան բլոկի երկներում կոմունիստական համակարգերի փլուզումից հետո սկսված սոցիալական և կրոնական վերածննդի»: Ռենովաբիսը աջակցություն է ցուցաբերում նախկին սոցիալիստական երկրներում իրականացվող հովվական, սոցիալական և համայնքային ծրագրերին: Դրա տարածաշրջանային պատասխանատուն է Հերբերտ Շեդլերը, ով 1995 թ.-ից զբաղվում է կովկասյան հանրապետություններով:¹⁹

Այս կազմակերպությունը կարևոր դերակատար է դարձել կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների հետ շփման հարցերում, շնորհիվ հատկապես

19 Ռենովաբիսի օգնության ծրագրերի ու առհասարակ տարածաշրջանային գործունեության մասին տեղեկությունները հիմնականում կարելի է տեսնել իրենց կայքում՝ www.renovabis.de (հարցվել է 28.8.2023):

իր «Արևելք-արևմուտք հեռանկարներ» (Ost-West-Perspektiven) պարբերականին: 2003 թ. մի ողջ համար մանրամասնորեն անդրադարձել էր կովկասյան հանրապետությունների եկեղեցիներին: Ռենովաբիսի գործընկերը, ծրագրային առումով, հայ կաթոլիկ արքեպիսկոպոս Մինասեանն է: 2020 թ. հոկտեմբերի 9-ին, ռազմական գործողությունների սկսվելուց երկու օր անց, ի թիվս այլ օժանդակությունների, 30000 եվրոյի չափով շտապ օգնություն է տրամադրվում տարածաշրջանին:²⁰ Այս գումարի շնորհիվ՝ Արցախից տեղահանված 50 ընտանիք կարողանում են տեղավորվել Հայաստանի Կարիտասի նախկինում միայն ամառային շրջանում գործող ճամբարում: 2021 թ. փետրվարին Ռենովաբիսի և Բեռլինի կաթոլիկ ակադեմիայի կազմակերպած «Լսիր արևելքին» առցանց բանախոսությունների շարքում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հայաստանում և Արցախում տիրող իրավիճակին, որին ներկա էին 190 դիտորդ:²¹ Հրավիրված զրուցակիցը Վայոց ձորի Հայ առաքելական եկեղեցու թեմի ծրագրերի ղեկավար, ինչպես նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի դասախոս, Հարություն Գ. Հարությունյանն էր, ով ուսանել է Այխշթեթում և Սյունստերում:

2021 թ. դեկտեմբերի 3-ին հրապարակվել է Գերմանիայում կաթոլիկների հստակ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի/Արցախի հակամարտության վերաբերյալ՝ որպես գերմանացի կաթոլիկների կենտրոնական կոմիտեի և Ռենովաբիսի համատեղ հայտարարություն: Դրա վերնագրում ասվում է. «Դադարեցնել տեղահանումները – Ամոքել մարդկային տառապանքները – Պահպանել մշակութային ժառանգությունը: Կաթոլիկները կոչ են անում աջակցել Լեռնային Ղարաբաղի հայերին»: Հայտարարության սկզբում նկարագրվում է իրավիճակը.

«Գերմանացի կաթոլիկների կենտրոնական կոմիտեն և Ռենովաբիս համերաշխության նախաձեռնությունը մեծ անհանգստությամբ են դիտում Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածաշրջանում վտանգված մարդկանց իրավիճակը: Դարեր շարունակ այնտեղ ապրող քրիստոնյա հայերին, ինչը փաստված է, ներկայումս զոյաբանական վտանգ է սպառնում: Այսօր նրանց թիվը հասնում է 150 հազարի: Մեր հավաստակից եղբայրներն ու քույրերը վախենում են իրենց կյանքի համար: Նրանց անապահով իրավիճակն ավելի է սրվել Ադրբեյջանի և Հայաստանի միջև վերջին պատերազմի հետևանքով: Այդ հակամարտությունն արդեն հազարավոր կյանքեր է խլել: Հայկական հարուստ մշակութային արժեքները, ինչպես նաև եկեղեցիներն ու վանքերը միտումնավոր ավերվել են և ղեռ մնում են վտանգված: Այժմ Ռուսաստանի միջնորդությամբ համաձայնություն է ձեռք բերվել զինադադարի մասին, ինչը բազում հայերի համար հայրենիքի կորուստ է նշանակում: Այն տարածքներից, որոնք պետք է հանձնվեն Ադրբեյջանին, տասնյակ հազարավոր մարդիկ փախչում են Հայաստանի Հանրապետություն:

20 Համաձայն Ռենովաբիսի մամուլի հաղորդագրության KNA-Notizblock (5 հուլիսի 2022):

21 Կարելի է լսել իրենց կայքում՝ www.renovabis.de (հարցվել է 28.8.2023):

Լեռնային Ղարաբաղի շուրջ բախումների հիմքում ընկած են ավելի քան հարյուր տարի տևող էթնիկ և կրոնական լարվածություններ: Այսօրվա բնակիչներից շատերը դա 1915-1916 թթ. օսմանյան կայսրության կողմից հայերի հանդեպ իրագործված ցեղասպանությունից վերապրածների ժառանգներն են: Նրանց տրավմատիկ հավաքական հիշողության ֆոնին, հաշվի առնելով Թուրքիայի զանգվածային ներգրավվածությունը հակամարտությանը և Ադրբեջանի պատերազմաքարոզչական պրոպագանդան, հայերի մոտ սեփական տարածաշրջանի վրա հարձակումն առաջացրել է գոյութենաբանական խորքային սարսափներ: Հարևան Թուրքիայից անօրինական կերպով տարածաշրջան տեղափոխված իսլամիստ վարձկանների ակտիվ մասնակցությունը պատերազմին և սարսափ ու խուճապ է առաջացրել, ինչպես նաև՝ հիմնավորել կրոնական դրդապատճառներ ունեցող պատերազմի տպավորությունը: Հայ ժողովուրդն ու նրա մշակույթը կոմկասյան տարածաշրջանում զանգվածայնորեն վտանգված են: Այս մասին բարձրաձայնում է նաև Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն իր նոյեմբերի կեսերին հրապարակված հայտարարությամբ»:

Այս վերլուծությանը և «մեր քրիստոնյա եղբայրներին ու քույրերին սպառնացող գոյաբանական սպառնալիքին» հաջորդում է բոլոր մյուս եկեղեցիներին, Գերմանիայի դաշնային կառավարությանը և Եվրամիությանն ուղղված կոչը.

- «Պահանջում ենք մարդասիրական լայնածավալ աջակցություն՝ կոմկասում ձմռան սկզբին Հայաստան փախած և իրենց տներն ու բնակարանները կորցրած մարդկանց:
- Լեռնային Ղարաբաղը (բացի մինչև գործող զինադադարը Հայաստանի կողմից գրավված շրջանների) իր հայ բնակչությամբ պետք է անցնի ՄԱԿ-ի մանդատի պաշտպանության ներքո: Միայն այսպես կարելի է տարածաշրջանում տևապես կանխել նոր պատերազմական գործողություններն ու ամրապնդել ապագա խաղաղ գոյակցությունը:
- Կոչ ենք անում Գերմանիայի դաշնային կառավարությանը՝ արգելել զենքի մատակարարումը՝ Լեռնային Ղարաբաղում հետագա հակամարտությունների պոտենցիալ դերակատարներին և չբացառել տնտեսական պատժամիջոցները, որպես քաղաքական ազդեցություն գործադրելու միջոց (ազդեստրների դեմ):
- Ակնկալում ենք, որ Գերմանիայի դաշնային կառավարությունը բացահայտ կերպով կդատապարտի Լեռնային Ղարաբաղի շուրջ զինված հակամարտությունների ժամանակ կատարված հանցագործությունները: Եկեղեցիների ու բակոծումը և կասետային ռումբերի օգտագործումը միջազգային իրավունքի խախտումներ ու ռազմական հանցագործություններ են, որոնք պետք է հստակորեն իրենց անունով կոչվեն և պատժվեն:
- Դեմ ենք արտահայտվում քաղաքական և ռազմական նպատակներով կրոնի գործիքավորմանը, ինչն ակնհայտորեն տեղի է ունեցել այս

հակամարտությունում: Երբ կրոնը չարաշահվում է քաղաքականապես, ապա դա խորապես հակասում է իր էությանը:

- Ակնկալում ենք թե՛ Գերմանիայի դաշնային կառավարության և թե՛ հասարակական բոլոր խմբերի, ու հատկապես եկեղեցիների մասնակցությունը՝ պաշտպանելու հայազգի կրոնական փոքրամասնությանն ու նրա մշակութային արժեքներն Ադրբեյջանի կողմից գրավված տարածքներում: Ադրբեյջանական Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից հայ բնակչության արտաքսումը և հայկական մշակութային արժեքների ոչնչացումը չպետք է կրկնվեն Լեռնային Ղարաբաղում: Անհրաժեշտ է բոլոր միջոցներով կանխել տարածաշրջանում հայկական մշակութային ժառանգության կործանումը:
- Կոչ ենք անում բոլոր դավանանքների քրիստոնյաներին՝ կապ հաստատել Գերմանիայի հայախոս համայնքների հետ և կարեկից դառնալ մեր հավատակից քույրերին և եղբայրներին՝ իրենց վախերի և նեղության մեջ»:

Ինչպես մատնանշվեց ավելի վերևում, այս պահանջները ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի/Արցախի հակամարտության վերաբերյալ գերմանացի կաթոլիկների կողմից հնչող, շատ եզակի, հայտարարությունների, ինչպես նաև այս ուղղությամբ Վատիկանի գործունեության համատեքստում: Ցավոք սրտի, տվյալ բանաձևը չգտավ սպասված արձագանքն ամենօրյա մամուլում, բայց որպես դիրքորոշում, վստահաբար ունենալու է դեռ իր հետագա ազդեցությունը:

«Հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում/Արցախում և գերմանացիները» թեմայով գիտաժողովի նյութերի հրատարակիչներն ամրագրել են.

«Այսօր, համենայն դեպս Գերմանիայում, քչերն են իսկապես ծանոթ Հայ առաքելական եկեղեցուն: Դրանք հիմնականում նշված ոլորտի մասնագետներն են, կամ առանձին անհատներ, որոնք առնչություն ունեն իրենց հարևանությամբ ապրող հայերի հետ: Մենք՝ գիտաժողովի կազմակերպիչներս, շահագրգռված ենք շարունակելու վերոնշյալ ավանդույթը: [...] Մենք շահագրգռված ենք մատնանշելու այն փաստը, որ նաև այստեղ այս յուրահատուկ քրիստոնեական ժառանգությունը պետք է պահպանվի: [...] Հայ եկեղեցին տառապում է Թուրքիայի շատ վայրերում և հարևան Նախիջևանում իր մշակութային ժառանգության կործանման եղելությունից: Տվյալ իրողությունը պարտավորեցնում է մեզ՝ իբրև հավատակից քույրեր ու եղբայրներ, աջակցելու և պաշտպանելու Հայ եկեղեցին»:²²

Սրան են միանում նաև Գերմանիայում կաթոլիկ քրիստոնյաները:

22 Tamcke (2021), 30 և շարւ:

Գրականություն

Armenian Patriarchal See of Cilicia, Bishops, տես՝ <http://www.gcatholic.org/dioceses/diocese/cilio.htm?focus=25212&tab=bishops> հարցվել է 03.09.2023):

Basten, Jörg, Länderinfo: Armenien, in: OST-WEST Europäische Perspektiven [OWEP] 4 /2003, 301-303, թարմացված տարբերակով տես՝ www.renovabis.de/laender-projekte/laenderinformationen/armenien (հարցվել է 30.08.2023):

Der Heilige Stuhl, Apostolische Reise von Papst Franziskus nach Armenien. Gemeinsame Erklärung von Seiner Heiligkeit Papst Franziskus und Seiner Heiligkeit Karekin II. im heiligen Etschmiadsin, Republik Armenien, 2016, տես՝ https://www.vatican.va/content/francesco/de/speeches/2016/june/documents/papa-francesco_20160626_armenia-dichiarazione-congiunta.html (հարցվել է 03.09.2023):

Der Heilige Stuhl, Apostolische Reise von Papst Franziskus nach Armenien. Pressekonferenz mit dem Heiligen Vater auf dem Rückflug nach Armenien, 2016, տես՝ https://www.vatican.va/content/francesco/de/speeches/2016/june/documents/papa-francesco_20160626_armenia-conferenza-stampa.html (հարցվել է 03.09.2023):

Der Heilige Stuhl, Apostolische Reise von Papst Franziskus nach Georgien und Aserbaidschan. Pressekonferenz mit dem Heiligen Vater auf dem Rückflug Baku-Rom, 2016, unter: https://www.vatican.va/content/francesco/de/speeches/2016/october/documents/papa-francesco_20161002_georgia-azerbaijan-conferenza-stampa.html (հարցվել է 03.09.2023):

Johann-Adam-Möhler-Institut für Ökumenik, Paderborn, Mitarbeiter. Dr. Johannes Oeldemann, տես՝ <https://de.moehlerinstitut.de/institut/mitarbeiter/wissenschaftliches-kollegium/92-institut/mitarbeiterinnen/149-dr-johannes-oeldemann> (հարցվել է 03.09.2023):

Katholische Universität Eichstätt-Ingolstadt, Mitarbeitende der Stiftungsprofessur. Prof. Dr. Thomas Kremer, տես՝ <https://www.ku.de/thf/theologie-des-christlichen-ostens/mitarbeitende/prof-dr-thomas-kremer> (հարցվել է 03.09.2023):

Kermani, Navid, Entlang den Gräben. Eine Reise durch das östliche Europa bis nach Isfahan, München 2018:

Pulling, Georg, KNA-Meldung vom 14. 2. 2022:

Renovabis, Das Osteuropa-Hilfswerk der Katholischen Kirche in Deutschland, unter: <https://www.renovabis.de/> (հարցվել է 28.08.2023):

Tamcke, Martin և այլք (խմբ.), Das armenische Kulturerbe in Berg-Karabach/Arzach und die Deutschen, Göttingen 2021:

Universität Münster, Personen. Prof. Dr. Thomas Bremer, տես՝ <https://www.uni-muenster.de/FB2/personen/oekumene/abt2/bremer.html> (հարցվել է 03.09.2023):

Wikipedia, José Avelino Bettencourt, 2023, տես՝ https://de.wikipedia.org/wiki/Jos%C3%A9_Avelino_Bettencourt (հարցվել է 03.09.2023):

Հեղինակ

Թոմաս Շտերնբերգ, փիլ. գիտ. դոկտ. և ածբն. գիտ. դոկտ., պատվո պրոֆ.

Հյուսիսային Հռենոս-Վեսթֆալիա նահանգի արվեստի հիմնադրամի նախագահ, Դյուսելդորֆ, Գերմանիա, sternberg@kunststiftungnrw.de

Թարգմանությունը՝ Արտակ Ավետիս Սահակյանի

Open Access

This paper is published under the Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International license ([CC BY-SA 4.0](https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/)). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.